SMYRNE
Directeur - Rédacteur en chef
H. MAMOURIAN
10 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԱՂԸ

Վաղը 1500 ամեակը կը լրանայ Հայոց Գրերու Գիւտին և 400 ամեակը՝ Հայկական Տպագրութեան։

Տրոփող և տենդագին յուզումով մը շաբաթներէ ի վեր, և ոմանց համար տարիէ մը ասդին, բովանդակ Հայութեան սրտին մէջ կը զեղու անճառելի խանդաղատում մը Սրբազան Արարատէն ասդին ու անդին և մինչև օտար հեռաւոր ափերու վրայ խլուած ու նետուած Հայ տարագրութիւններու վրայ միութեան կապ մը ու կամար մը ձևացնելով։

Ս. Մեսրոպի գիրը և Ս. Սահակի լեզուին օրհնութեան տարափով մը կ'անձրևեն մեր ալեւոր Ազգին ձիւնապսակ գլխուն վրայ իրենց փառքերը հագնիրգելու։

Անոր համար վաղը Հայ Եկեղեցին իր ամենէն աւագ օրերու վայելքները կը հագնի և մոմերու ու ջահերու ամենէն նուիրականներովը կը լուսազարդէ Սուրբերու գլխուն շուրջը լուսեղէն պսակներ ձևացնելով։

Անոր համար վաղը բովանդակ Հայ Ազգը իր քաղաքական տօներուն ամենէն շքեղաշուքն ու պերճունակը կը տօնէ, զոր երբէք տօնեց Հայկական Նաւասարդներէն ասդին։

Վաղը երթանք չնչել Հայ Եկեղեցիին խունկը, որ մաքուր աղօթքներու հետ միացած պիտի նուիրուի Հայոց էն նուիրական սուրբերուն, և դարձեալ վաղը երթանք լսել բոլոր օրհնաձօներն ու երգերը, որոնք պիտի վերառաքուին Ս. Մեսրոպեանի մթնոլորտներուն տակ, ուր եկեղեցին ու դպրոցը նոյնանալու չափ կը միանան և իրարու կը զօդուին իբրև ազգին երկու ամրապինդ պահպանակները, և գուցէ ասոր համար եղած ըլլայ որ մեր հեռաւոր նախահայրերը վաղնջական օրերէ ասդին, ուր Հայ եկեղեցի մըն են կանգներ, անոր բակին ու շրջապարիսպին մէջ չեն մոռցեր կանգնել Հայուն դպրատունը և անոր անունը շատ յաճախ ալ դնել Ս. Մեսրոպեան, իբրև երախտապարտութեան խորհրդանշանակը Հայ Գրին և անոր պահպանութեան։

Վաղը ամբողջ օրը անոնցմով ապրինք, որոնք մեզի ապրեցուցին հոգևորապէս և մարմնաւորապէս. զի Ս. Սահակի սրբաւանդ կրօնքը եթէ Հայութեան հոգիին սնունդն եղաւ, Ս. Մեսրոպի լուսաճաճանչ և ջահակիր գիրը Հայութեան սրտին և քաղաքական մարմինին սննդառութեան գործիքն եղաւ։ Եւ ի՞նչ առանձնապէս պիտի արժէին հոգին՝ առանց մարմինի, և մարմինը՝ առանց հոգիի ներդաշնակ զուգորդութեան։

Վաղը անո՛ր համար Հայութեան է՛ն մեծ ու նուիրական օրերէն մէկն է, որովհետև չկայ Հայ մը, փարթամ իշխանազունէն սկսած մինչև համեստուհանակ խրճիթին տակ ապրող և պարզուկ բռնաֆիրէն սկսած մինչև ամենէն բարձր աստիճանը եղող Հայ մը, որ անխուսափելիօրէն պիտի չյիշէ թէ՝ որո՞ւ է որ կը պարտի իր կերած պատառիկ մը չոր հացէն սկսած մինչև իր համադաշին վայելքը, եթէ ոչ Սրբոցն Սահակայ և Մեսրոպայ ոսկեղէնիկ տառերուն ուղղակի կամ անուղղակի շնորհներուն։

Անո՛ր համար վաղուան և վաղայաջորդ օրուան տօներուն, առանց բացառութեան, ներկայ ըլլալու են, ըստ Հայրապետական հրամանի, աշակերտն ու վարժապետը, գործարանատէրն ու գործաւորը, տէրն ու ծառան, զի ամէ՛նքը, ամէ՛նքը իրենց խոնարհագոյն դիրքէն մինչև իրենց բարձրագոյն դիրքը պարտական են Հայ Գրին, Հայ Խօսքին։

Վաղը համօրէն հայութեան հասարակական հաւասարութեան տօնն է. վաղը բովանդակ Հայ Ազգին միացեալ երախտապարտութեան տօնն է՝ հանդէպ Հայ Գրին։

Վաղը դարերու Մեծ Հանգրուանն է, ուր պիտի հանդիպինք ու կանգ առնենք ժամանակներու միգապատ մշուշներուն մէջէն խորհրդաւորօրէն մեզի ընդառաջող երկու սրբազնասուրբ մեծ ու լուսեղէն դէմքերու առջև, որո՛նք մեզի կանգ առնել պիտի տան մեր 1500 տարիներէ ի վեր քալած ճամբուն վրայ, և մինչ հաշիւ ու համար պիտի պահանջեն իրենց մեզի տըւած այն քանքարին գործածութեան համար, որուն նմանը իրենց Երկնաւոր Վարդապետը և Տէրն ալ տուած էր մարդկութեան։

Արդեօք մեզի աւանդուած այդ նուիրական քանքարը լաւ և ուղղամտութեամբ գործածեցի՞նք։

Ի՞նչ պիտի պատասխանենք իրենց այդ հաշուեյարդարութեան ժամերուն։

—Է՛ ուրեք, ուր, այո՛, լաւ գործածեցինք. է՛ ուրեք, երբ քանքարաթաքոյց եղանք, է՛ ուրեք, ուր անոր գործածութեամբ բեղմնաւորեցինք զայն, և եղաւ ալ որ անոր մէկ կողմէն խորեցինք, կերանք ու զեղծանեցինք...

Ու անոնք պիտի ըսեն մեզի.

—Ապրիս, ծառայ բարի, զի հաւատարիմ եղար և արգասաւորեցիր քեզի աւանդուած քանքարս։

Եւ դարձեալ պիտի ըսեն մենէ ոմանց ալ.

—Ծառայ չար և անհաւատարիմ, ի՞նչ ըրիր Տէրոջդ քեզ յանձնած աւանդը։

Տօնը, զոր վաղը պիտի կատարենք, Հայուն քաղաքակրթութեան տօնն է, Հայուն մտաւոր շարժման տօնն է, որ կը սկսի ասկէ տասնեհինգ դարեր առաջ, և կը ծաղկի ու կը բարգաւաճի Հայկական Բարձունքներուն վրայ կղզիացած ու բո՛յն դրած Ազգի մը ծոցին մէջ, որ հուրի ու սուրի շրջապատէ մը միշտ իր վրայ խուժող արիւնի և կրակի ալազաններէ անցած և մկրտուած, իր կողերուն վրայ ազգերու շատ սուր ու սլաքն է կոտրտած, և դեռ կը մնայ կանգուն։

Իրմէ առաջ և իրմէ վերջը շատ ազգեր եկան և գացին, և ինքը մնաց իբր անսասան ժայռ՝ ազգերու խառնիճաղանճին մէջ, իր հպարտ լեռներուն վրայ փակած իբրև պատմական Միլանիա։

Իբրև ճշմարիտ քրիստոնեայ ան իր շրջապատին պէս չընտրեց զէնքն ու վայրենութիւնը իր գոյութեան անվթար պահպանման համար, բայց ընտրեց գիրն ու քաղաքակրթութիւնը և անոնցմով մաքառեցաւ դարերու ընթացքին մէջ իր գըլխուն վրայ պայթող բուռն փոթորիկներուն դէմ, և պէտք է հպարտութեամբ ըսել թէ՝ յաղթեց ալ։

Վաղը այդ Գրին և Քաղաքակրթութեան տօնն է անա, որ բովանդակ Հայութիւնը պիտի տօնէ և պանծացնէ։

Ուրեմն վաղը երթանք չնչել Հայ Եկեղեցիին խունկը, որ Ս. Սահակին բխացող մաքուր սիրտն է, և դարձեալ երթանք լսել բոլոր օրհնաձօներն ու երգերը, որոնք Ս. Մեսրոպ Մաշթոցի ոսկեղէն գրին և ոսկեղէնիկ լեզուին օրհնութեան անձրևներն են, որ վիրաւոր Հայութեան սրտին վրայ պիտի կաթկթին և սպեղանի դառնան Սրբազան Արարատէն ասդին և անդին գտնուած բոլոր Հայութեան ու դարձեալ ի սփիւռս աշխարհի ոլորտներուն ցրուած Հայ տարագիրներուն սրտերը թարմացնելու և իրարու զօդելու, որպէսզի անգամ մըն ալ հաստատուի Հայութիւնը իր այդ երկու անսասան ժայռերուն վրայ։

ԱՎՕ